

ԿՐՈՆԻ ՀԵՏ ՓՈՒՆՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱԿՈՐՈՒՄՆ ՈՒ ՀԱՍՏԱՏՈՒՄՆ ԻՍՐԱՅԵԼԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿՈՐՄԱՆ ՆԱԽՕՐԵԻՆ

Վարսեր Կարապետյան

*ՀՀ փաստաբանների պալատի հանրային պաշտպանի
գրասենյակի ղեկավարի տեղակալ,
ԵՊՀ պետության և իրավունքի տեսության
ու պատմության ամբիոնի ասպիրանտ,
Հայդելբերգի համալսարանի
իրեագիտության ինստիտուտի մագիստրանտ*

Ժամանակակից Իսրայելի պետությունում կրոնի հետ փոխհարաբերությունները հիմքը դրվել է դեռևս պետության հիմնադրմանը նախորդած ժամանակահատվածում¹, մասնավորապես Յիշուվի գոյության տարիներին (1918-1948թթ.):

Յիշուվը ենթամանդատային Պաղեստինի իրեական համայնքն էր, որն *inter alia* ստեղծվել էր՝ ի կատարումն Բալֆուրի հռչակագրի (1917թ.): Հռչակագրով մասնավորապես առաջ էր քաշվում Պաղեստինում իրեական պետություն՝ «ազգային տուն», ստեղծելու գաղափարը՝ միաժամանակ ընդգծելով տեղի ոչ իրեական համայնքի (արաբների՝ Վ.Կ.) քաղաքական ու կրոնական իրավունքները պահպանելու կարևորությունը³: Բալֆուրի հռչակագրի բովանդակությունը նույնությամբ արտա-

¹ «Իսրայել» տերմինը պատմականորեն վերաբերում է նաև Իսրայելի թագավորությանը (մ.թ.ա. 930-720թթ.): Նշված ժամանակահատվածում Միացյալ իրեական թագավորությունը (մ.թ.ա. 1050-930թթ.) բաժանված էր երկու պետությունների միջև՝ հյուսիսային Իսրայելի թագավորությունը, որ կառավարվել է մի քանի ոչ կայուն դինաստիաների կողմից, և հարավային Հուդայի թագավորությունը, որն իր գոյության ողջ ընթացքում կառավարվել է Հուդայի ցեղից սերող դավիդյան դինաստիայի կողմից: Որոշ հետազոտողների պնդմամբ, սակայն, պատմական Իսրայելում պետության և կրոնի միջև փոխհարաբերությունների արմատները ձգվում են մինչև Թորա՝ իրեական աստվածաշունչ: Այսպես, ինչպես նշված է 1 Սամուել 8-ում, Իսրայելի երեցները դիմում են Սամուելին, որ վերջինս իրենց համար թագավոր նշանակի. «... Հիմա մեզ համար մի թագավոր նշանակիր, որ դատի մեզ, ինչպես որ ընդունված է մյուս բոլոր ազգերի մոտ»: Դրան հաջորդում է Աստծո պատասխանը. «Լսիր ժողովրդի ձայնին և արա այն ամենը, որ ասացին քեզ, որովհետև նրանք ոչ թե քեզ են մերժում, այլ ինձ, որ նրանց թագավոր չլինեն»: (Տե՛ս Ա Թագավորաց 8) (<http://bible.crossnews.am>): Պետություն-կրոն փոխհարաբերության խնդիրները մանրամասն կարգավորում են ստացել Հրեական բանավոր ուսմունքում՝ Միշնայում («Սանհեդրին» տրակտատ), ապա նաև՝ Թալմուդում: Այս հարցերին մանրամասն անդրադարձել է միջնադարյան իրեա ականավոր փիլիսոփա Մայմոնիդեսը (1135 կամ 1138-1204թթ.): Այս մասին տե՛ս, օրինակ, The Jewish Political Tradition (Volume 2) / editors: Walzer M., Lorberbaum M., Zohar M. J.; coeditor: Ackerman A. Yale University Press, 2003:

² «Բալֆուրի հռչակագիր» է կոչվում Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարար Արթուր Ջեյմս Բալֆուրի 1917 թվականի նոյեմբերի 2-ի նամակը՝ ուղղված բրիտանացի ականավոր սիոնիստ լորդ Ռոբերտին: Տե՛ս, օրինակ, Штереншис М. История государства Израиль: 1896-2005. Герцлия. Исрадон, 2005, էջ 60-61:

³ Հռչակագրում մասնավորապես ասվում է. «Նորին մեծություն կառավարությունը բարյացակամ է Պաղեստինում իրեա ժողովրդի համար «ազգային տան» ստեղծման գաղափարին և ամեն ջանք կգործադրի այդ նպատակի իրականացումը խթանելու համար, այդուհանդերձ պետք է հստակ գիտակցվի, որ ոչ մի քայլ չի ձեռնարկվի, որը կարող է վնաս հասցնել Պաղեստինի ոչ իրեական համայնքի քաղաքական և կրոնական իրավունքներին կամ այլ երկրներում բնակվող իրեաների իրավունքներին և նրանց քաղաքական կարգավիճակին»: Տե՛ս Штереншис М. նշվ. աշխ.:

ցույցն ան Ազգերի լիգայի դաշնագրում, որի նախաբանի համաձայն՝ Պաղեստինի նկատմամբ բրիտանական մանդատի նպատակը, *inter alia*, Պաղեստինում հրեա ժողովրդի համար ազգային տուն ստեղծելն էր¹:

Յիշուվը, չնայած իր գոյության ընդամենը երեսուն տարիներին, կարևոր դեր խաղաց ապագա հրեական պետության կայացման գործում՝ անհրաժեշտ սոցիալ-քաղաքական ինստիտուտների ձևավորման և կայացման տեսանկյունից: Պատահական չէ, որ այս ժամանակաշրջանի պաղեստինյան հրեական համայնքը ընդունված է համարել «պետություն ճանապարհին» կամ «պետություն պետության մեջ»: Այս ժամանակահատվածը, թերևս, առավել վճռորոշ էր պետության և կրոնի միջև փոխհարաբերությունների ձևավորման և հաստատման առումով, ինչն իր արտահայտությունը ստացավ 1947թ. պետության և կրոնի հարցերում ձեռք բերված համաձայնությամբ՝ այսպես կոչված կրոնական ստատուս-քվոյի համաձայնագրով:

Համաձայնագիրը, որ արտացոլում էր հրեական համայնքի տարբեր սոցիալ-քաղաքական և կրոնական ուժերի միջև գոյություն ունեցող իրական հաշվեկշիռը, կարևոր քայլ էր Իսրայելի պետության կազմավորման ճանապարհին: Ընդգծելով այս համաձայնագրի կարևոր պատմական նշանակությունը՝ ստորև ամենաընդհանուր գծերով ներկայացնում ենք Իսրայելի պետության հիմնադրմանը նախորդած ժամանակահատվածում Յիշուվում տիրող քվադի-քաղաքական իրադրությունը՝ համապատասխան սոցիալ-քաղաքական և կրոնական գաղափարախոսությունների վերլուծության համատեքստում: Այս անդրադարձը կնպաստի ստատուս-քվոյի վերաբերյալ համաձայնագրի էությունն ու իրական նշանակությունն առավել լիարժեք ընկալելուն:

Այսպես, ինչպես գիտենք, Իսրայելի պետությունը ստեղծումը սերտորեն առնչվում է սիոնիզմի գաղափարախոսության հետ. Իսրայելի պետությունը հաճախ ներկայացվում է որպես սիոնիզմի կամ, որ ավելի ճիշտ է, քաղաքական սիոնիզմի² ծրագիր: Ծնունդ տալով ժամանակակից հրեական պետությանը՝ քաղաքական սիոնիզմն ավելի ուշ պետք է հռչակվեր որպես այդ պետության պաշտոնական գաղափարախոսություն³, որն իր ազդեցությունը պետք է ունենար պետական շինա-

¹ «Նկատի ունենալով, որ հիմնական դաշնակից ուժերը համաձայնել են, որ Մանդատային երկիրը պատասխանատվություն է կրում Պաղեստինի տարածքում հրեա ժողովրդի համար ազգային տուն ստեղծելու վերաբերյալ բրիտանական կառավարության կողմից դեռևս 1917թ. նոյեմբերի 2-ին ընդունած և նշված ուժերի կողմից հաստատված հռչակագիրը գործողության մեջ դնելու հարցում...», - ասված է դաշնագրի նախաբանում (տե՛ս http://avalon.law.yale.edu/20th_century/palmanda.asp):

² Սիոնիզմի մասին խոսելիս անհրաժեշտ է նկատի ունենալ, որ այն ներառում է տարբեր ուղղություններ և գաղափարախոսություններ: Սույնում ուսումնասիրության առարկան առավելապես քաղաքական սիոնիզմն է, քանի որ այն սերտորեն առնչվում է մեր կողմից արծարծվող հարցերին: Սիոնիզմի լայն տարածում գտած ուղղություններից է նաև մշակութային սիոնիզմը՝ քաղաքական սիոնիզմի հակազդափարախոսությունը, որի հիմնադրույթները ներկայացված են մշակութային սիոնիզմի առաջամարտիկ Ահադ Հա-ամի (Աշեր Գինգբերգ) աշխատություններում: Մասնավորապես, իր «Ստրկություն ազատության մեջ» աշխատությունում հեղինակը փորձում է ցույց տալ, թե քաղաքական սիոնիզմի ջատագովները, հատկապես Թեոդոր Հերցլն ու Մաքս Նորդաուն, ինչքան են հեռացել հրեական ազգային մշակույթից (տե՛ս Walzer M. և մյուսներ, նշված աշխատությունը, էջ 51-58):

³ Նույն գաղափարախոսությունը միջազգային աստիճանների կողմից հռչակվել է նաև ռասիստական: Այսպես, ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի «Ռասայական խտրականության բոլոր ձևերի մասին» թիվ 3379 բանաձևով ընդունված 10.11.1975թ. ասամբլեայի 30-րդ համաձայնարում, Իսրայելը, ի թիվս մի քանի այլ պետությունների, ճանաչվեց որպես ապարթեյդի քաղաքականություն վարող պետություն: Նույն բանաձևով սիոնիզմը ճանաչվեց ռասիզմի և ռասայական խտրականության ձև: Նշվածը որոշ չափով արտահայտում է սիոնիստական գաղափարախոսության և հետևաբար նաև Իսրայելի պետության նկատմամբ առկա խիստ տարակարծությունները՝ բացարձակ համակրանքից մինչև բացարձակ ատելություն:

րարության տարբեր բնագավառների վրա՝ մեծապես պայմանավորելով նաև Իսրայելի պետության իրավական համակարգի բնույթը: Բացի այդ, հենց սիոնիստների և ուլտրաուղափառների՝ երկու հակամարտ ուժերի քաղաքական երկխոսության արդյունքում էր, որ ծնվեց ստատուս-քվոյի վերաբերյալ նշված համաձայնագիրը, որը պետության կազմավորումից հետո պետք է դառնար պետության հետագա սոցիալ-քաղաքական զարգացումների ուղենիշ:

Ընդունված է համարել, որ սիոնիզմը սկիզբ է առել 19-րդ դարի վերջերին. զուտ խորհրդանշական կերպով նշվում է Թեոդոր Հերցելի՝ «Հրեական պետություն», ավելի ճիշտ՝ «Հրեաների պետություն»¹ աշխատության լույսընծայումը Բազելում (Շվեյցարիա) 1896թ.: Նշվածը, թերևս, խիստ պայմանական բնույթ է կրում, քանի որ սիոնիզմի, այսինքն՝ Սիոնին վերադառնալու գաղափարը, գուցե ոչ այնքան հստակ ձևակերպված, այնուամենայնիվ, արտահայտվել է շատ ավելի վաղ ժամանակներից սկսած: Այս առումով հետաքրքրական է հատկապես պրոֆ. Նոյերգերի տեսակետը, որը սիոնիզմի սկզբնավորումը վերագրում է հրեաների բաբելոնյան գերեվարության ժամանակաշրջանին՝ մ.թ.ա. 6-րդ դար²: Այդուհանդերձ, ընդունված է համարել, որ Հերցելն առաջինն էր, ով այս գաղափարին տվեց մշակված քաղաքական ծրագրի տեսք³:

Սիոնիզմը նպատակ ուներ հրեա ժողովրդի համար, այսպես ասած, «նորմալության» հասնել. ասել է թե՛ հրեաները «սովորական» ազգ են և մյուս ազգերի նման իրենց պետությունը կամ «ազգային տունն» ունենալու իրավունք ունեն: Դա, ըստ սիոնիզմի, հրեական հարցին վերջնական լուծում տալու միջոց էր⁴: Քաղաքական սիոնիզմի առաջ քաշած այս գաղափարը՝ որպես վերջինիս կենտրոնական հայեցակարգ, ինչպես կոտենենք ստորև, ակնհայտորեն հակասում էր հուդայականության՝ որպես կրոնի, գաղափարափիլիսոփայական և արժեքաբանական համակարգի հիմնադրույթներին, ինչն էլ լուրջ հակասությունների ու հակադրությունների տեղիք պիտի տար ժամանակակից հրեական պետության ստեղծման նախաշեմին:

Իսկ ահա զուտ գործնական իրագործման տեսակետից քաղաքական սիոնիզմը Պաղեստինի տարածքում հրեական պետության ստեղծումը տեսնում էր Ավետ-

¹ Աշխատության անվանումը հիմնականում սխալ է թարգմանվում: «Der Judenstaat» գերմաներեն բառացի նշանակում է «Հրեաների պետություն», այսինքն՝ պետություն միայն հրեաների համար, ինչը և Հերցելն իրականում նկատի է ունեցել:

² Տե՛ս **Нойбергера Б.** Что такое сионизм? М.: Издание Дипломатической академии МИД РФ, 1995 (<http://hedir.openu.ac.il/kurs/politika1/zionut.html>):

³ Ընդունված է Թեոդոր Հերցելին համարել սիոնիզմի նախահայր՝ իր գաղափարախոսական ծրագրի և սիոնիստական շարժումը կազմակերպելու աննկուն պայքարի շնորհիվ: Առանց նսեմացնելու վերջինիս դերը՝ մի շարք մասնագետներ, սակայն, նշում են, որ նա առաջինը չէր, ով փորձեց համակարգել սիոնիստական գաղափարախոսության մտավոր և ֆիզիկական ներուժը: Այսպես, Ս.Ն. Ուիլցիգ Լեբմանն իր «Նախասիոնիզմը և դրա նախա-Հերցելը. Ուաբբի Ցվի Հըրշ Քալիշերի փիլիսոփայությունը և ջանքերը» հոդվածում փորձում է հիմնավորել, որ այս «բարձր կոչմանն» արժանի են մի շարք անհատներ և, մասնավորապես, Ուաբբի Ցվի Հըրշ Քալիշերը (Lebman Wilzig S. N. Proto-Zionism and its Proto-Herzl: The Philosophy and Efforts of Rabbi Zvi Hirsch Kalisher // Tradition: A Journal of Orthodox Thought, 16, 1976):

⁴ Մասնագիտական գրականության մեջ լայնորեն ընդունված է, որ սիոնիզմը, մեծ հաշվով, նաև Եվրոպայում հրեաների ազատագրության (էմանսիպացիայի) և միաձուլման (ասիմիլացիայի) ծախողման արդյունք էր. 20-րդ դարասկզբին Եվրոպայում տիրող իրողությունը դրոշեց հրեական համայնքի առաջնորդներին, որոնցից շատերը ասիմիլացված հրեաներ էին, փրկությունը տեսնել էրեց-Իսրայելում ազգային տուն ստեղծելու մեջ (տե՛ս **Elazar J. D., Aviad J.** Religion and politics in Israel: The interplay of Judaism and Zionism / edited by Curtis M. Colorado, Westview Press, Boulder, 1981, էջ 5-7):

յաց Երկիր հրեաների զանգվածային ներգաղթի շնորհիվ, որ պիտի իրագործվեր իրենց իսկ կողմից առաջ քաշված «մարդ-տարածք-փող» շղթայի շնորհիվ¹: Հրեաների ներգաղթի համար², ինչպես արդեն նշվել է վերևում, առկա էր անհրաժեշտ միջազգային-քաղաքական միջավայր:

Հերցելն անձամբ՝ որպես քաղաքական սիոնիզմի հիմնադիր և Իսրայելի պետության նախահայր, նշել է. «Այն (հրեական հարցը՝ Վ.Կ.) վաղուց արդեն կրոնական խնդիր չէ: Այն որևէ կապ չունի կրոնի և խղճի հետ... Ավելին բոլորը դա գիտեն: Հրեական հարցը ո՛չ կրոնական է և ո՛չ էլ ազգային, այն զուտ սոցիալական խնդիր է»³: Նշվածը հստակորեն արտահայտում է Հերցելի վերաբերմունքը հրեական կրոնի և ստեղծվելիք հրեական պետության մեջ դրա ունեցած տեղի ու դերի նկատմամբ:

Այսպես, Հերցելը նախատեսում էր զուտ աշխարհիկ պետության ստեղծում՝ արիստրոկրատական կառավարման ռեժիմով, որտեղ կրոնը որևէ դեր չէր ունենա պետական կառավարման գործերում, իսկ ռաբբիները «փակված կլինեին» իրենց տաճարներում: «Արդյո՞ք մենք կավարտենք կրոնապետություն հիմնելով: Ո՛չ, անկասկած: Հավատքը միավորում է մեզ, գիտելիքը՝ մեզ ազատություն տալիս: Հետևաբար, մենք պետք է խափանենք մեր հոգևորականության կողմից դրսևորվող ցանկացած կրոնական զեղում: Մենք պետք է «փակենք» մեր ռաբբիներին իրենց տաճարներում այնպես, ինչպես մեր արհեստավարժ բանակը՝ զորանոցներում: Թե՛ բանակը և թե՛ հոգևորականությունն արժանվույնս կփոխհատուցվեն իրենց կարևորագույն առաքելության համար, բայց դրանք չպետք է միջամտեն պետության կառավարման գործերին... այլապես դժվարություններ կստեղծեն թե՛ ներսում և թե՛ դրսում»⁴, - նշում է Հերցելը⁵:

Թեև ապագա հրեական պետության Հերցելի տեսլականը խիստ աշխարհիկ էր, սակայն, ինչպես ցույց տվեցին հետագա զարգացումները, այն անհնար էր կյանքի

¹ Այս մասին ավելի մանրամասն տե՛ս **Մերենից Մ.**, նշվ. աշխ., էջ 28-56:

² Հրեաների զանգվածային ներգաղթը Պաղեստին շարունակվեց մինչև 1939թ., երբ արաբական երկրների և Պաղեստինի արաբ ազգաբնակչության ճնշումների ներքո Պաղեստինի մանդատային իշխանությունները ստիպված եղան սահմանափակել դեպի Պաղեստին հրեաների մուտքը՝ նախատեսելով, որ հրեաների ներգաղթը Պաղեստին կշարունակվի ևս 5 տարի՝ տարեկան 10.000 մարդ: Նախատեսվում էր նաև, որ հնարավորություն դեպքում այդ թիվը կարող էր ավելացվել ևս 25.000-ով, առավելագույնը Պաղեստինի տարածք թույլատրելով ևս 75.000 հրեայի: Նշված փաստաթուղթը հայտնի է «Սպիտակ թուղթ» անվանմամբ: Սպիտակ թղթով, որպես ներգաղթյալների թվի սահմանափակման հիմնավորում, նշվում էր, որ Պաղեստինում հրեաների համար արդեն իսկ ստեղծված է «ազգային տունը»՝ այսպիսով կատարված համարելով բրիտանական իշխանությունների՝ հրեական համայնքներին տրված խոստումը: (Տե՛ս **Մերենից Մ.** նշված աշխատությունը, էջ 80-83): Սակայն, կարճ ժամանակ անց՝ Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում Եվրոպայում հրեաների զանգվածային ոչնչացումները պետք է նոր հնարավորություն ստեղծեին հրեաների՝ Պաղեստինի տարածքում ազգային պետություն ունենալու ձանապարհին: Հատկանշական է, որ «Սպիտակ թուղթն» առաջին փաստաթուղթն էր, որ վերացվեց Իսրայելի պետության ժամանակավոր իշխանությունների կողմից:

³ Տե՛ս **Lipsky L., Bein A. Theodor Herzl: The Jewish State.** New York, Dover Publications Inc., 2008, էջ 14:

⁴ Տե՛ս **Lipsky L., Bein A.**, նշված աշխատությունը, էջ 79:

⁵ Սիոնիզմը նպատակ ուներ ստեղծելու նոր հրեական հասարակություն և կերտել նոր «եբրայեցի» մարդուն՝ հիմնված արևմտյան արժեքների և մարդասիրական (հումանիստական) գաղափարների վրա՝ զերծ ուղղափառ հրեական կենսապերպից: Այդուհանդերձ, սիոնիզմը ամբողջությամբ չէր բացառում կապը հուդայականության հետ:

կոչել: Հուդայականությունն, իր բոլոր տարրնկալումներով հանդերձ, շարունակում էր մնալ այն իրական ուժը, որն ի գորու էր համախմբել հրեա ժողովրդին և երաշխավորել վերջինիս «հավաքական» վերադարձն Ավետյաց երկիր¹: Այդ իսկ պատճառով քաղաքական սիոնիզմը՝ չնայած իր զուտ աշխարհիկ բնույթին, ստիպված էր հայացքը դարձնել դեպի կրոնը՝ փորձելով փոխգիշտումների ճանապարհով անհրաժեշտ նախադրյալներ ստեղծել ազգային պետականության վերականգնման համար:

Այժմ անդրադառնալով ավանդական հուդայականությանը՝ պետք նշել, որ վերջինիս դիրքերից Ավետյաց երկրում հրեական պետականության վերականգնումն ուներ բացառապես կրոնական խորհուրդ. այն հնարավոր էր միայն «կրոնական փրկության» ճանապարհով՝ Մեսիայի գալստով և Սուրբ հողում նրա թագավորության հաստատմամբ: Գաղափարական այս անդունդը, որ առկա էր այս երկու գաղափարախոսությունների միջև, անհրաժեշտորեն պետք է հաղթահարվեր ժամանակակից հրեական պետության ստեղծման ճանապարհին²:

Այսպես, 20-րդ դարի սկզբներին քաղաքական նոր իրողությամբ թելադրված հուդայականությունն իր հերթին կանգնած էր լուրջ խնդրի առջև. անհրաժեշտ էր հաշվեկշռել հրեա ժողովրդի ազգային ձգտումները մի կողմից և սեփական կրոնական ուսմունքները մյուս կողմից: Հուդայականության առջև ծառայած այս խնդիրը կարելի է ձևակերպել հետևյալ մեկ նախադասությամբ. աշխարհիկ՝ ոչ կրոնական հրեական պետությունը գոյության իրավունք ունի³, թե՞ ոչ: Այս հարցը հուդայականության մեջ զրեթե միաժամանակ ծնունդ տվեց երկու տարբեր քաղաքական-գաղափարախոսական ուղղությունների, որոնցից յուրաքանչյուրն իր կարևոր մասնակացությունը պետք է ունենար ապագա հրեական պետության կազմավորման գործում³:

Առաջինը կրոնական սիոնիստական ուղղությունն էր՝ Միգրախի անվանմամբ

¹ Հատկանշական է, որ 1800-ական թվականների սկզբներին «օսմանական» Պաղեստինում հրեա բնակչության թիվն ընդամենը 24.000 էր, որոնցից տարբեր գնահատումներով 5.000-7.000-ը՝ Երուսաղեմում: Պետության ստեղծման նախաշեմին Պաղեստինի հրեա բնակչության թիվն արդեն դարձավ 554.000 (<http://www.jewishvirtuallibrary.org/jsource/History/demographics.html>): Հրեաների վերադարձն Ավետյաց երկիր ապահովելու համար սիոնիզմը հուդայականության, ավելի կոնկրետ՝ դրա որոշ հայեցակարգային դրույթների «կարիքն ուներ». անհրաժեշտ էր Պաղեստինում «ազգային տուն ունենալու» սիոնիստների բաղձանքը կապել «Խոստացված երկիր» վերադառնալու հայեցակարգի հետ՝ դրա կրոնական ընկալմամբ: Թեև, հետաքրքրական է, որ սիոնիստ ղեկավարների կողմից սկզբնական շրջանում Ավետյաց երկրի հետ հրեա ժողովրդի կրոնական կապն էր նույնիսկ անտեսվում. քննարկվում էր այլ տարածքներում՝ Ուզանդա, Սիբիր, Արգենտինա և այլն, «ազգային տուն» ստեղծելու հնարավորությունը: Անձամբ Հերցելը հակված էր հատկապես Արգենտինայի տարբերակին, սակայն հաշվի առնելով հրեա ժողովրդի պատմական կապը Պաղեստինի տարածքի հետ, նրա ընտրությունը կանգ առավ Պաղեստինի վրա:

² Պատկերն ամբողջական դարձնելու համար անհրաժեշտ է հիշատակել հրեական կրոնի մեջ գոյություն ունեցող, այսպես կոչված, դրական պատվիրանն առ այն, որով հրեաների զանգվածային ներգաղթն Ավետյաց երկիր թույլատրվում էր միայն Մեսիայի գալուստի հետ միաժամանակ: Այս պատվիրանը ևս մեկ խոչընդոտ էր պետության կառուցման համար Հերցելի կողմից առաջ քաշված մարդ-տարածք-փող շրթայի հաջող իրագործման ճանապարհին, ինչն ստիպեց կրոնական սիոնիզմի ժամանակի խոշորագույն մտածողներին այդ արգելքը հաղթահարելու կամ այն շրջանցելու ճանապարհներ փնտրել:

³ Պետության հիմնադրմանը նախորդած ժամանակահատվածում տարբեր քվազի-քաղաքական ուժերի միջև փոխազդեցության, մասնավորապես՝ ազգային և կրոնական փոխհարաբերության հետ կապված ավելի մանրամասն տե՛ս, օրինակ, Elazar J. D., Aviad J., նշված աշխատությունը:

(եբրայերեն՝ օրօֆօ)՝ Մերկազ Ռուհանի հապավումից, որ եբրայերենից թարգմանաբար նշանակում է կրոնական կենտրոն¹: Կրոնական սիոնիզմի մեջ կենտրոնական էր այն ուսմունքը, որ սիոնիզմը (քաղաքական սիոնիզմը) ունի կրոնական արժեք, և, որ ավելին է, այն անհրաժեշտ է հրեա ժողովրդի կրոնական փրկության համար: Այդ իսկ պատճառով իրենք իրենց հերթին պարտավոր են իրենցից կախված ամեն ինչ անել այս նպատակի արդյունավետ իրագործման նպատակով²: Մասնավորապես, ըստ այս ուղղության հետևորդների՝ աշխարհիկ սիոնիզմը անհրաժեշտ քայլ էր հրեա ժողովրդի հոգևոր և ազգային վերածննդի համար՝ դեպի մեսիանիկ ժամանակներ տանող ճանապարհին³:

Այժմ անդրադառնալով կրոնական սիոնիզմի հետապնդած առավել գործնական նպատակներին՝ դրանք կարելի է ձևակերպել հետևյալ կերպ: Նախ, այն նպատակ ուներ ազդելու քաղաքական սիոնիզմի վրա՝ այն ուղղորդելով իր կողմից նախանշված՝ առավել կրոնական հունով: Սյուս կողմից, կրոնական սիոնիզմը նպատակ ուներ ազդելու ուղղափառ հրեաների վրա՝ քաղաքական սիոնիզմի համար ապահովելով վերջիններիս օժանդակությունը⁴:

Հուդայականության շրջանակներում ձևավորված գաղափարական երկրորդ ուղղությունը «Ազուդաթ Իսրայելն» էր (եբրայերեն՝ אצוּדָתִּיִּם), որ բառացի նշանակում է «Իսրայելի համայնք»⁵: Վերջինիս հենքի վրա հետագայում կազմավորեց համանուն քաղաքական կուսակցությունը, որն առանցքային դեր պետք է խաղար Իսրայելի պետության հետագա քաղաքական կյանքում⁶: Ազուդաթ Իսրայելն սկզբնապես ժխտում էր քաղաքական սիոնիզմի և ընդհանրապես սիոնիզմի՝ որևէ կրոնական նշանակություն ունենալու հանգամանքը. այն հակամարտ, կրոնական ոչ սիոնիստական շարժում էր և հանդես էր գալիս որպես քաղաքական սիոնիզմի գաղափարական հակաթեզիս: Իր գաղափարախոսությանը հավատարիմ՝ Ազուդաթ Իսրայելն սկզբում թեև կատաղորեն դիմադրում էր աշխարհիկ հրեական պետություն ստեղծելու «Ուսթաժեմնությունը», սակայն հետագայում ընկրկեց. մեծա-

¹ Հետաքրքրական է, որ կրոնական-սիոնիստական գաղափարախոսության սաղմերը կարելի է գտնել ավելի վաղ ռաբբի Ցվի Հիրշ Քալիշերի և այլոց աշխատություններում: Ավելի մանրամասն տե՛ս Lebman Wilzig S. N., նշված աշխատությունը:

² Կրոնական սիոնիզմի նախահայրերը փորձում էին տալ Սիոն վերադառնալու գաղափարական հիմնավորումը, օրինակ՝ Քալիշերն իր ամենախոշոր աշխատություններից մեկի նախաբանում «Ռիշոն լե-Ցիոն» (թարգմանաբար՝ «Առաջինը դեպի Սիոն», իրատարակված՝ 1864թ.) արժարժում է այն հարցը, թե արդյոք անհատին թույլատրվում է նախքան մեսիանիկ ազատագրումը վերադառնալ Էրեց-Իսրայել՝ փորձելով հիմնավորել սիոնիստական նկրտումները: Ավելի մանրամասն տե՛ս Lebman Wilzig S. N., նշված աշխատությունը:

³ Կրոնական սիոնիզմի ականավոր գործիչներից է համարվում Աբրահամ Իսահակ Կուկը (1865-1935), որը, Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո վերադառնալով Իսրայել, նշանակվեց որպես Երուսաղեմի գլխավոր ռաբբի և Պաղեստինի ողջ տարածքում փաստացի ղեկավարում էր հրեական կրոնական կյանքը: Լինելով թալմուդիստ՝ Կուկը, ի տարբերություն մյուս հոգևոր հայրերի, գտնում էր, որ սիոնիզմն ու հուդայականությունն իրար չեն հակասում, և որ հրեաները պետք է ձգտեն տեղափոխվել Էրեց-Իսրայել և այնտեղ հրեական պետություն հիմնադրեն: Պաղեստինյան հրեական համայնքի կյանքում ռաբբի Կուկի ունեցած կարևոր դերակատարության մասին տե՛ս, օրինակ, Штереншис М. նշված աշխատությունը, էջ 43:

⁴ Դրան հնարավոր էր հասնել միայն ուղղափառ հրեա հանրության, որ այդ ժամանակ դեռևս համաշխարհային հրեականության մեծամասնությունն էր, աչքերում շարժումն «օրինակամացնելու» ճանապարհով: Ավելի մանրամասն տե՛ս Elazar J. D., Aviad J., նշված աշխատությունը, էջ 7:

⁵ «Ազուդաթ Իսրայելը» որպես «համաշխարհային» կազմակերպություն ստեղծվել է 1912թ.-Կատովիցայում (Լեհաստան):

⁶ Ազուդաթ Իսրայելին հարողները կոչվում են խարեդիներ (եբրայերեն՝ חֲרָדִים):

պես երկրորդ աշխարհամարտի տարիներին Եվրոպայում տիրող իրադրությունից դրդված՝ այն որոշակի փոխզիջումների գնաց քաղաքական սիոնիզմի հետ¹, այսպիսով «կանաչ լույս» վառելով Իսրայելի պետության հիմնադրման ճանապարհին²: Այսպիսին էր հրեական Յիշուվի քվադի-քաղաքական իրադրությունն իր հիմնական ուրվագծերով՝ նախքան Իսրայելի պետության կազմավորումը: Այս ժամանակաշրջանի ամփոփ նկարագիրն անհրաժեշտ էր պետության և կրոնի միջև փոխհարաբերությունների հետագա զարգացումների, մասնավորապես՝ կրոնի հարցերում հաստատված ստատուս-քվոյի դերի ու նշանակության ամբողջական ընկալման համար:

Այսպես, կրոնական ստատուս-քվոն, ընդհանրապես, և Իսրայելի պետության դեպքում, մասնավորապես, արտացոլում են պետության՝ կրոնի հետ ունեցած հարաբերություններում հաստատված հաշվեկշիռը: Իսրայելի պետության դեպքում թերևս հետաքրքրական է այն, որ տվյալ դեպքում այն նախորդեց պետության ստեղծմանը՝ կարևոր նախադրյալ հանդիսանալով այդ գործընթացում:

Իսրայելի պետության անկախության հռչակումից դեռևս մեկ տարի առաջ՝ 1947թ. ամռանը, արդեն իսկ հիմնական գծերով հստակեցված էր կրոնի, ավելի ճիշտ՝ հրեական կրոնի (հուդայականության)³ հետ հարաբերություններում ապագա հրեական պետության քաղաքականությունը: Այն ամրագրվեց նույն թվականի հունիսի 19-ին «Հրեական գործակալություն» սիոնիստական կազմակերպության անունից Ղավիդ բեն Գուրիոնի՝ Ագուդաթ Իսրայելին հասցեագրած նամակում⁴: Նամակում, ընդգծելով ապագա հրեական պետության աշխարհիկ բնույթը՝ գերծ կրոնական հարկադրանքից ու խտրականությունից, միաժամանակ երաշխավորվում էր հրեական կրոնականության պահանջումը քննարկումը հետևյալ հիմնական հարցերում.

- Շաբաթը պետք է լիներ հանգստի օր, իսկ պետության ոչ հրեա ազգաբնակչությանը հնարավորություն կընձեռվեր ընտրելու հանգստի իրենց օրը.
- Քաշրութը՝ սննդակարգային նորմերը, պետք է պահպանվեր հանրային բոլոր այն հաստատություններում, որոնցից օգտվում էին հրեաները.
- անձնական կարգավիճակի վերաբերյալ այդ ժամանակ գործող իրավունքը պետք է շարունակեր իր գործողությունը՝ հրեա հասարակության աշխարհիկ և կրոնական հատվածների միջև անջրպետ չանցկացնելու նկատառմամբ.
- կրոնական դպրոցների առանձնացված համակարգ պետք է ստեղծվեր:

¹ Փոխզիջումների արդյունքում, օրինակ, Սոխնուտի՝ Հրեական գործակալության հետ կնքված համաձայնագրի հիման վրա, Ագուդաթ Իսրայելն ստացավ ենթամանդատային Պաղեստինի տարածք մուտք գործելու հավաստագրերի ընդհանուր թվի 6.5%-ը:

² Ուլտրաուղղափառ հուդայականության սիոնիզմի հետ փոխզիջումների գնալու մասին խոսելիս պետք է որոշակի «զգուշավորություն» ցուցաբերել. մինչ օրս Իսրայելում կան համայնքներ, որոնք ապրում են առանձին թաղամասերում: Ժխտելով Իսրայելի պետությունը վերջիններս կազմում են «պետություն պետության մեջ»՝ հավատալով, որ իսկական հրեական պետությունը կարող է վերականգնվել միայն Մեսիայի գալուստով: Հետևաբար, երբ խոսում ենք ուլտրաուղղափառ հուդայականության մասին, առավելապես նկատի ունենք դրա քաղաքական էսթաբլիշմենթը:

³ Այլ կրոնների դեպքում պահպանվեց Օսմանյան կայսրության ժամանակաշրջանում արդեն իսկ գոյություն ունեցող ստատուս-քվոն, ըստ որի՝ ճանաչում ստացած կրոնական համայնքները հատկապես անձնական կարգավիճակի հարցերում օժտված էին լայն ինքնավարությամբ:

⁴ Նամակն անվանապես ուղղված էր ռաբբի Ի.Մ. Լիկնին: Նշված երկու հակամարտ ուժերի միջև, որպես կապող օղակ, հանդես էր գալիս, կրոնական սիոնիզմի քաղաքական դեկավարությունը՝ ի դեմս Ռաբբի Յ.Լ. Ֆիշմանի, ինչպես նաև Ռաբբի Յ. Գրինբերգի:

Ահա այսպիսին էր քաղաքական-սիոնիստական կազմակերպության կողմից կրոնական հակասիոնիստական կազմակերպությանը հասցեգրված նամակի հիմնական բովանդակությունը, որը մասնագիտական գրականության մեջ առավելապես հայտնի է «Ստատուսքվոյի համաձայնագիր» անվանմամբ: Հարկ է նշել, որ Ազուդաթ Իսրայելն իր հերթին ևս գնաց որոշակի զիջումների: Մասնավորապես հրաժարվեց ապագա հրեական պետության ողջ տարածքում Հալախան հրեական կրոնական իրավունքը, անհապաղ և ողջ ծավալով գործադրելու գաղափարից, համաձայնեց շաբաթ և տոն օրերին պետական ռադիոյի հեռարձակմանը և այլն: Այս փոխադարձ զիջումները որոշ առումով թելադրված էին այն հանգամանքի հստակ գիտակցմամբ, որ ՄԱԿ-ը որևէ դեպքում հավանություն չէր տա ապագա հրեական պետության մեջ կրոնապետության ծննդին¹: Բացի դրանից, ձեռք բերվածն ըստ էության արտացոլում էր հրեական համայնքի աշխարհիկ և կրոնական ուժերի միջև առկա իրական հաշվեկշիռը:

Մեր գնահատմամբ, ձեռք բերված ստատուսքվոն աշխարհիկի և կրոնականի պայքարում այն նվազագույն շեմն էր, որն անհրաժեշտորեն պետք է հաղթահարվեր պետության ստեղծման նախաշեմին²: Ձևակերպվելով դեռևս մինչպետական շրջանում՝ ստատուսքվոյի վերաբերյալ այս համաձայնագիրը հսկայական նշանակություն պետք է ունենար Իսրայելի պետության հետագա տարիներին՝ մեծապես պայմանավորելով դրա զարգացման ուղին:

Իհարկե, տարբեր ժամանակներում տարբեր սոցիալ-քաղաքական ուժերի կողմից փորձեր են արվել և դեռ կարվեն՝ փոխելու պետության և կրոնի միջև հաստատված այս հաշվեկշիռը՝ հօգուտ մեկ կամ մյուս կողմի³, սակայն պետք է փաստել, որ, որոշ շեղումներով հանդերձ, այն էականորեն փոփոխել չի հաջողվել մինչ օրս: Ավելին, Իսրայելի պետության բոլոր կոալիցիոն կառավարությունները բոլոր ժամանակներում կոալիցիոն հուշագրերում առանձին կետով իրենց հավատար-

¹ Նույն պնդումը հավասարապես ճիշտ է նաև արաբական պետության վերաբերյալ. ՄԱԿ-ն ի սկզբանե նախատեսում էր նախկին Պաղեստինի տարածքում երկու աշխարհիկ պետությունների ծնունդ՝ կառավարման ժողովրդավարական ռեժիմով, ինչը հստակորեն արտացոլված էր ՄԱԿ-ի համապատասխան բանաձևում:

² Այս հարցի վերաբերյալ առկա են նաև այլ տեսակետներ. մասնավորապես, Դանելի Ջ. Էլագարն ու Ջանեթ Ավիարը իրենց «Կրոնը և քաղաքականությունն Իսրայելում. հուդայականության և սիոնիզմի փոխազդեցությունը» ձեռնարկում հարցադրում են անում, թե. «Ինչու՞ սիոնիստական շարժումը, ապա նաև պետությունը, որի բնակչության մեծամասնությունը հավատացյալ չէր՝ ուղղափառ լինելու իմաստով, Իսրայելում «օրինականացրին» և «հիմնադրեցին» կրոնական ինստիտուտները՝ Իսրայելի հասարակության մեջ տեղ տալով կրոնականության գոյությանն ու ազդեցությանը: Այլ կերպ ասած ինչու՞ ոչ «հավատացյալ» հանրությունը ընկրկեց կրոնականության առջև: Ինչու՞ Իսրայելում կրոնի և պետության միջև պայքար Կուլտուրկամֆ, տեղի չունեցավ:»: Փորձելով պատասխանել իրենց իսկ կողմից առաջադրված հարցին՝ հեղինակները դա պայմանավորում են հուդայականության հետ հրեա ժողովրդի ունեցած ոչ միանշանակ կապով. «Բնակչության լայն զանգվածները դրականորեն են տրամադրված հրեական ավանդույթին և առանձին տարրերին, որոնց նրանք հետևում են իրենց ընտանիքներում: Այսինքն՝ հուդայականությունը կամ դրա աշխարհայացքային համակարգն ամբողջությամբ չընդունելով հանդերձ՝ հրեաները ցանկանում են կապ պահել հրեական ավանդույթի հետ, որն իր հիմքում նույնականացվում է հրեական ազգային կրոնական մշակույթի հետ: Նրանք այդ ավանդույթի որոշ տարրեր կամ դրա որոշ ասպեկտներ ցանկանում են պահպանել՝ որպես իսրայելյան մշակույթի մաս և Իսրայելի հասարակության արժեքներ»: (տե՛ս Elazar J. D., Aviad J., նշված աշխատությունը, էջ 23-30):

³ Ստատուսքվոն փոփոխելու փորձերի մասին խոսելիս հատկանշական են հատկապես 1967թ.՝ Վեցօրյա պատերազմից հետո, և 1988թ. Կնեսետի ընտրությունները, երբ առաջին անգամ ոչ սիոնիստական ուլտրաուղղափառ կուսակցությունը առավելություն ունեցավ կրոնական-սիոնիստական կուսակցության՝ Մաֆդալի համեմատությամբ:

մութիւնն են հայտնել և հայտնում հաստատված ստատուսքվոն պահպանելու կապակցութեամբ¹: Այսպիսի երևույթը, որ, անշուշտ, պայմանավորված է երկրի հասարակական-քաղաքական կյանքում կրոնական ուժերի ունեցած դեռևս զգալի դերակատարութեամբ, մեր գնահատմամբ, ունի մեկ այլ՝ առավել կարևոր բացատրություն, այն է՝ կրոնը՝ որպէս ժամանակակից Իսրայելի պետությունում հրեականության դրսևորում, դարձել է Իսրայելը որպէս հրեական պետություն պահպանելու կենսական և անհրաժեշտ գործոն: Հրեական պետություն ասելով՝ նկատի ունենք պետություն՝ հրեական մշակույթով, հրեական արժեհամակարգով և, որ առավել կարևոր է, հրեա բնակչության մեծամասնութեամբ²:

ФОРМИРОВАНИЕ И УТВЕРЖДЕНИЕ ВЗАИМООТНОШЕНИЙ С РЕЛИГИЕЙ НАКАНУНЕ ОБРАЗОВАНИЯ ГОСУДАРСТВА ИЗРАИЛЬ

Варсер Карапетян

*Заместитель руководителя канцелярии общественного защитника Палаты адвокатов Республики Армения,
Аспирант кафедры теории и истории государства и права,
Магистр института иудаики Гайдельбергского университета*

Статья рассматривает процесс формирования и становления взаимоотношений с религией в будущем еврейском государстве в контексте анализа социально-политических и религиозных сил и их идеологий, преобладающих в еврейской общине (Йишуви) Палестины. Это важно для наиболее полного понимания сути и реального значения так называемого соглашения о религиозном статусе-кво.

В статье, в частности, указывается, как две противоборствующие силы-политический сионизм и ультра-православный иудаизм, путем компромисса, пришли к согласию о месте и роли иудаизма (еврейская религия) в будущем еврейском государстве, утверждая, так называемое, соглашение о религиозном статусе-кво 1947 года.

Соглашение, подчеркивая светский характер будущего еврейского государства-свободный от религиозного принуждения, одновременно гарантировало удовлетворение религиозных нужд еврейства в ряде вопросов, таких как, например, сохранение шабада и религиозных браков и разводов и т.д.

Сформулированное еще в догосударственный период, соглашение о

¹ Մասնագիտական գրականության մեջ ընդունված տեսակետի համաձայն՝ քաղաքական կուսակցությունների դերն ու ազդեցությունն Իսրայելում ավելի մեծ են, քան որևէ այլ երկրում: Դրա հնարավոր պատճառներից նշվում է ի սկզբանե անկախ՝ կամավորական հիմունքներով գործող սինիստական գործակալությունների գործունեությունը, որոնց դերն անգնահատելի է Իսրայելի պետության կազմավորման և կայացման հարցում (տե՛ս **Edelman M.** The Changing Role of the Israeli Supreme Court // Comparative Judicial Systems: Challenging Frontiers in Conceptual and Empirical Analysis / Editor Schmidhauser J. R. Butterworths, 1987, էջ 93-111)

² Այս մասին տե՛ս, օրինակ, **Александрова С.А.** Религия и демократия в Израиле // Ближний Восток и современность, сборник статей, выпуск пятый, Москва, 2003, էջ 122-136:

религиозном статусе-кво должно было иметь огромную важность в течение последующих лет существования государства Израиль, в большинстве обуславливая путь его развития и, что наиболее важно, суть и содержание правовой системы.

FORMATION AND ESTABLISHMENT OF RELATIONSHIPS WITH RELIGION ON THE EVE OF CREATION OF THE STATE OF ISRAEL

Varser Karapetyan

*Deputy Head at the Public Defender Office of the
Chamber of Advocates of the RA,*

*PhD Student at the YSU Chair of Theory and History of State and Law,
MA, University of Heidelberg, Hochschule for Jewish Studies*

The article examines the process of formation and establishment of interrelations with the religion in the Jewish state to be created in the context of analysis of dominating socio-political and religious forces and their ideologies in the Jewish community of Palestine (Yishuv). This reference is important for the fuller understanding of the essence and real meaning of, so called, Status-Quo agreement.

It is particularly demonstrated in the article how two antagonistic forces - Political Zionism and Ultra-Orthodox Judaism through the way of compromises agreed upon the place and role of Judaism (Jewish Religion) in the future Jewish State, thus establishing, so called, Religious Status-Quo Agreement of 1947.

Underlying the secular character of the Jewish state to be created, free from religious coercion, the agreement, at the same time, guaranteed meeting the religious demands of the Judaism in a series of issues, such as maintaining of the Sabbath, religious marriages and divorces etc.

Being yet formed in the pre-state period, this agreement on the Status-Quo was to have a tremendous role in the following years of the existence of the State of Israel, defining its way of development and, what is more important, character and content of the legal system.

Բանալի բառեր- *Իսրայելի պետություն, կրոնական ստատուսքվո, սիոնիզմ, հուդայականություն, հրեական համայնք, շաբաթ, քաշրութ, կրոնական դպրոց*

Ключевые слова: *государство Израиль, религиозный статус-кво, сионизм, иудейство, еврейская община, шабад, кашрут, религиозная школа*

Key words: *The state of Israel, religious status-quo, Zionism, Judaism, Jewish community, Sabbath, Kashrut, religious school*